

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԴԵՐՆ ԱՅՍՕՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Արմինե ԳԱԼՍՅԱՆ

Եվրասիա Միջազգային Համալսարանի ասպիրանտ

Բանալի բառեր. հիմնական Եկամուտ, նվազագույն կարիքները, սոցիալական անվտանգության համակարգ, քաղաքացիներ, աղքատություն

Պարտադիր Հիմնական Եկամուտը (ինչպես նաև Հիմնական Եկամուտ, Երաշխավորված Հիմնական Եկամուտ, Քաղաքացու Եկամուտ, և Համաշխարհային Հիմնական Եկամուտ) սոցիալական անվտանգության համակարգ է, երբ պետության բոլոր քաղաքացիները պարբերաբար ստանում են պարտադիր գումար: Քաղաքացիները կարող են ստանալ Պարտադիր Հիմնական Եկամուտը ի հավելում իրենց այլ եկամուտների: Այն պետք է լինի պետության պարտքը իր քաղաքացիների նկատմամբ: ՊՀԵ-ը բարեկեցություն ապահովող ծրագիր չի համարվում: Նրա հիմնական նպատակն է՝ հասարակության յուրաքանչյուր անդամին հնարավորություն տալ հոգալ իրենց նվազագույն կարիքները. ապրելավայր, սնունդ և բժշկական օգնություն:

Հիմնական Եկամուտի նպատակն է՝ երաշխավորել քաղաքացիների արժանապատվությունը: Երբ քաղաքացին ձերբազատվի տանիքի, սննդի ամենօրյա խնդիրներից, նա այլևս չի վախենա գոյատևման խնդրի առջև կանգնելուց:¹ Բրիտանացի տնտեսագետ Չեյ Ստենդինգը, այն տնտեսագետներից է, ով առաջադրում է հիմնական եկամուտ գաղափարը, և դրա վերաբերյալ առանձնացրել է երեք հիմնական տեսակետ.

1. Փիլիսոփայական տեսանկյունից հիմնական եկամուտը դիտարկել, որպես մարդու իրավունքներից մեկը:

2. Հիմնական եկամուտը կարող է դիտարկվել, որպես քաղաքական և տնտեսական ռազմավարության բաղկացուցիչ մասերից մեկը:

3. Ավելի ու ավելի է կարևորվում այն հանգամանքը, որ հիմնական եկամուտի ներուժը ընդլայնվելով՝ ապահովում է գենդերային և էկոլոգիապես ավելի կենսունակ ապագա²:

Ընդհակառակը, Ալբերտ Հիշերմենը իր 'Երկու հարյուր տարվա հետադիմական հռետորություն. անհաջող ազդեցության դեպքը' գրքում քննարկել է այս առաջադիմական գաղափարի երեք ազդեցությունները: Նա անվանել է այն կամակորության, ապարդյունության և վտանգավորության դրույթներ:

¹ G.Standing, Basic Income: A 21st Century Economic Right, -Institut de Drets Humans de Catalunya, http://www.guystanding.com/files/documents/CDHE_Standing.pdf

² G.Standing, An Anniversary Note – BIEN's 25th, - 'BIEN'
<http://basicincome.org/news/2011/09/anniversary-note-biens-25th/>

Առաջին դրույթը Հիշերմանը համարում է առավել պրիմիտիվը մնացած երեքի: Թվացյալ հաջողությունը, փաստորեն կունենա անկում, ինչն էլ իր հետ կբերի անկանխատեսելի հետևանքներ: Ցանկացած դիտավորյալ գործողություն, որն ուղղված է քաղաքական, սոցիալական և տնտեսական կարգերը բարելավելուն էլ ավելի կբարդացնի իրավիճակը: Երկրորդ՝ ապարդյունության դրույթն այն է, որ նման փորձարկումը դեռ վաղ է իրականացնել և այն չի ունենա ցանկալի արդյունք: Նման սոցիալական բարեփոխման փորձերը ապարդյուն կլինեն և կծախողվեն: Իսկ գաղափարի վտանգավորությունն այն է, որ առաջարկվող փոփոխությունների կամ բարեփոխումների արժեքը շատ ավելի մեծ կլինի և այն վտանգի տակ կդնի առկա նպատակները:³

Նվազագույն աշխատավարձ՝ գաղափարը պատմության ընթացքում, որպես առանձին հասկացություն, գործածվել է 16-րդ դարում: 18-րդ դարում առաջ է եկել ‘պարտադիր միանվագ շնորհ’ գաղափարը: 19-րդ դարի կեսերին այս երկու գաղափարները համակցվել են և առաջացել է ‘պարտադիր հիմնական եկամուտ’ գաղափարը: Առաջին անգամ այս գաղափարը ներկայացվել է պորտուգալացի ճանապարհորդ Ռաֆայել Նոնսենսոյի կողմից՝ 16-րդ դարում: Թոմաս Մորը, 1516 թվականին, այն նկարագրել է որպես ‘Ուտոպիա’: Նոնսենսոյի կարծիքով ավելի խելամիտ է պայքարել գողության դեմ, քան գողերին դատապարտել մահվան, որը համարվում է մարդասպանություն: Նա ասել է. ‘նման սարսափելի պատժի փոխարեն, կարելի է մարդուն ապահովել իր կյանքի համար անհրաժեշտ որոշակի միջոցներով: Այդ ժամանակ, մարդը կարիքից դրդված չի դառնա գող, իսկ հետո՝ դիակ’:⁴

Ավելի ուշ՝ 1526 թվականին, Ջոնս Լյուդովիկոս Վիվեսը Բրուզսի քաղաքագլխին հասցեագրված հուշերում ‘De subventione peuperum’ (ի օգուտ աղքատության) ասել է, որ քաղաքային իշխանությունը պետք է իր վրա պարտականություն վերցնի՝ հոգալ բոլոր քաղաքացիների նվազագույն հոգսերը՝ ոչ թե արդարության միջոցով, այլ հանուն բարեգործության ավելի արդյունավետ իրականացման: Աղքատությունը չպետք է անարժան լինի: Օգնությունը, որ մարդը կստանա, հնարավորություն կտա նրան աշխատելու ցանկություն ունենալ: ‘Աստված ստեղծել է ամեն ինչ: Նա դրանք դրել է մեր տան մեջ, աշխարհում թողնելով առանց պատերի և դարպասների: Ուրեմն դրանից պետք է օգտվեն Իր բոլոր զավակները’⁵: 1776 թվականին, Թոմաս Ջեֆերսոնը առաջ քաշեց այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդու պետք

³ A.O.HIRSCHMAN, Two Hundred Years of Reactionary Rhetoric: The Case of the Perverse Effect, 1991. -The University of Michigan, -31 (page 9), http://tannerlectures.utah.edu/_documents/a-to-z/h/hirschman89.pdf

⁴ BIEN website, History of Basic Income, <http://basicincome.org/basic-income/history/>

⁵ BIEN website, History of Basic Income, <http://basicincome.org/basic-income/history/>

է տրվի հանրային հողերից 50 ակր, և որևէ մեկը իրավասու չի լինելու դա նրանից ետ վերցնել: Այստեղ, Ջեֆերսոնը ի նկատի է ունեցել ոչ թե սեփականաշնորհված հողերի վերաբաշխումը, այլ այն հողատարածքները, որոնք սեփականաշնորհված չեն և դեռևս չեն օգտագործվել: 1795 թվականին, Թոմաս Փեյնը հրատարակեց ‘Ագրարային արդարություն’ բրոշյուրը, որտեղ առաջարկվում էր ստեղծել այնպիսի ազգային ֆինանսավորման ձև, որ յուրաքանչյուր 21 տարին լրացած կամ ավելի մեծ անձիք ստանան ֆիքսված տարեկան եկամուտ: Նա պնդում էր, որ բոլոր մարդիկ արժանի են այդ օգնությանը: Սա նախատեսված էր այն մարդկանց համար, ովքեր հող չեն փոխառել: 1848 թվականին, Ջոզեֆ Շառլը հրատարակեց ‘Սոցիալական խնդիրների լուծում’ -ը, որտեղ նա պնդում էր, որ հողերը պետք է բաշխվեն հավասարաչափ⁶: 1862 թվականին, նմանատիպ առաջարկ էր արել Աբրահամ Լինկոլնը. հանրային հողերից՝ յուրաքանչյուր ընտանիքի ղեկավարի հատկացնել 160 ակր հողատարած, ով պետք է հինգ տարվա ընթացքում այն մշակի: Մինչ 1900-ական թվականները օրենքը գործում էր, և այդ ընթացքում 720,000 ազարակներ էին ստեղծվել:

1933 թ. Մեծ Ճգնաժամի ընթացքում Ֆրանցիս Թոունսենդը առաջարկեց յուրաքանչյուր մարդ, ով 60 տարեկան է և ավելի, պետք է ստանա 200 դոլար: Իսկ կառավարության բյուջեն այդ գումարով համալրելու համար 2%-ով պետք է բարձրացվի բոլոր գործարքների եկամտահարկը: Նրա այս առաջարկի շնորհիվ՝ հիմնվեց Ռուզվելտյան վարչակազմի սոցիալ ապահովագրական համակարգը: 1944 թ. Ֆրանկլին Ռուզվելտը, Կոնգրեսին հղած իր տարեկան զեկույցում նշել է. ‘իսկական անձնական ազատությունը չի կարող գոյություն ունենալ առնաց տնտեսական պաշտպանության և աջակցության: Կարիքի մեջ գտնվող մարդը՝ ազատ մարդ չէ: Իսկ բռնապետությունը իրականացվում է հենց սոված և անգործ մարդկանց նկատմամբ’:⁷ Ավելի ուշ՝ 20-րդ դարում, հիմնական եկամուտը տարբեր պետություններում սկսեց գործածվել տարբեր անուններով. ‘սոցիալական շահութաբաժին’, ‘ազգային շահութաբաժին’, ‘հիմնական եկամուտ’, ‘համընդհանուր դրամաշնորհ’ և այլն: Ժամանակակից աշխարհը էլ ավելի բարեկեցիկ դարձնելու նպատակով՝ տարբեր երկրներ, պլանավորեցին ներկայացնել Հիմնական եկամուտի փորձնական ծրագիրը: Մինչ 1986 թ. ‘Հիմնական եկամուտը’ ուներ ‘Սոցիալական շահութաբաժին’ անվանումը: Կատարելով հետազոտական աշխատանք՝ մենք ամփոփեցինք այն պետությունների ցանկը, որտեղ հիմնական եկամուտը ունեցել է փորձնական կիրառություն, կիրառվել է որպես համա-

⁶ BIEN website, History of Basic Income, <http://basicincome.org/basic-income/history/>

⁷ F. D. Roosevelt, 4 - State of the Union Message to Congress, -1944, <http://www.presidency.ucsb.edu/ws/?pid=16518>

կարգ կամ էլ քննարկել են նրա հնարավոր կիրառությունը ապագայում: Արդյունքում, շատ եվրոպական պետություններ՝ Միացյալ Թագավորությունը, Իռլանդիան, Իսլանդիան, Բելգիան, Շվեյցարիան, Ղանիան, Լյուքսեմբուրգը, Չեռնոսիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Հունաստանը, Կիպրոսը, Իսպանիան, Նիդերլանդները, Նորվեգիան, Շվեդիան, Հունգարիան և Չեխիան հնարավոր են համարել Հիմնական եկամուտի կիրառումը:

Շվեյցարիայում քննարկվել է հիմնական եկամուտի կիրառության հարցը: 2016 թ. հունիսի 5-ին, շվեդները, հնարաքվեով հավանություն տվեցին հիմնական եկամուտի կիրառությանը: Սակայն օրենքը չընդունվեց, չնայած այն փաստին, որ այս երկրում դեռևս 1980 թվականներից սկսել էին քննարկել հիմնական եկամուտի հնարավոր կիրառության հարցը: Շվեյցարիան աշխարհում առաջին պետությունն է, որտեղ հիմնական եկամուտի կիրառության համար իրականացվել է համազգային հանրաքվե:

Ֆինլանդիայում փորձը կանցկացվի 2017-2018 թթ.՝ երկրի սոցիալ-ապահովագրության ինստիտուտի հսկողության և ցուցումների ներքո: Խմբի միջից պատահականորեն ընտրված 2,000 քաղաքացիներ, որոնք արդեն օգտվում են գործազրկության նպաստներից՝ ամսական կստանան 560 եվրո հիմնական եկամուտ: Այս գումարը կփոխարինի նրանց նպաստներին: Այս ծրագիրը ինքնին բարդ է և ծախսատար: Պարզեցնելով այն՝ կնվազեն նաև բյուրոկրատական ծախսերը: Պատահականության սկզբունքով ընտրված քաղաքացիները, անկախ իրենց ունեցած եկամուտից, աշխատանքի առկայությունից կամ բացակայությունից, հարստությունից կամ զբաղվածության կարգավիճակից, երկու տարվա ընթացքում կստանան կայուն գումար: Այդ գումարից հարկեր չեն գանձվելու: Եթե ծրագիրը հաջողվի, այն ավելի կընդլայնվի՝ ընդգրկելով ավելի շատ չափահաս ֆինլանդացիներ:

Ճապոնիայում, Հարավային Կորեայում, Ավստրալիայում, Պորտուգալիայում, Բրազիլիայում, Կանադայում և Ալյասկայում դեռևս շարունակվում են Հիմնական եկամուտի շուրջ քննարկումները, իսկ Մակաուում (կիսաինքնավար քաղաք Չինաստանում) 2008 թ. ի վեր գործում է ծրագիր, ըստ որի, քաղաքացիները ունեն տարեկան որոշակի շահութաբաժին: Ծրագրի նպատակը այն է, որ բոլորն օգտվեն տարածաշրջանի տնտեսական զարգացման օգուտներից և գնաճի հետևանքները որոշակիորեն մեղմվեն:

Իրանում, 2010 թ. հունվարին անցկացվեց ծրագրի (սուբսիդավորման բարեփոխման ծրագիր) փորձնական տարբերակը, և ավելի ուշ՝ այդ տարի, այն կիրառվեց: Դրա նպատակն էր սուբսիդավորել սնունդը և էլեկտրաէներգիան (ընդամենը 80%)՝ նպատակաուղղված սոցիալական նպաստով: Սա հինգ տարի շարունակ կապահովեր ազատ շուկայական գներ: Պատմության ընթացքում սա առաջին դեպքն էր, երբ հիմնական եկամուտը կիրառվեց:

րառվում էր պետության մասշտաբով (պետության բոլոր քաղաքացիները ստանում էին գումար): Հիմնական եկամուտը կիրառվում էր, որպես հիմնական արտադրանքների, ինչպիսիք են՝ բենզինը և սննդամթերքը, սուբսիդիաների հեռացման համար: Այս ծրագրի շրջանակներում, յուրաքանչյուր Իրանի քաղաքացի անվերապահորեն ամսական ստանում էր 40-45 դոլար: Մեկ տարի անց՝ կառավարությունը սկսեց ֆինանսական խնդիրներ ունենալ, և իր որոշ քաղաքացիների, ովքեր աղքատ չէին, խնդրեց կամավոր հրաժարվել այդ գումարից: Քաղաքացիներից քչերը հրաժարվեցին դրանից: Կառավարությունը սկսեց գնահատել մարդկանց ֆինանսական վիճակը և ոմանց հանեց ծրագրից: Ժամանակի ընթացքում, ծրագիրը ֆինանսավորելու համար, կառավարության մոտ էլ ավելի մեծ խնդիրներ առաջացան: Ի վերջո՝ 2016 թ. ապրիլին Իրանի խորհրդարանը բնակչության մեկ-երրորդ մասին այդ գումարից զրկելու օրենք ընդունեց (մոտ 24 միլիոն քաղաքացիներ):

1982 թվականից Ալյասկայում բոլոր քաղաքացիները ստանում էին տարեկան հիմնական եկամուտ, որի չափն ամեն տարի տատանվում էր՝ նավթարդյունաբերությունից ստացած եկամուտի պատճառով: 2008 թ. հինգ անդամից բաղկացած ընտանիքը ստանում էր 16,345 դոլար, այսինքն՝ ամեն անդամ ստանում էր 3,269 դոլար: Վերջին տարիներին այն հասել է 1000-1500. հինգ հոգուց բաղկացած ընտանիքը ստանում է 5000-7500 դոլար⁸:

Հիմնական եկամուտի ֆինանսավորումը Իրանում, Մակաույում և Ալյասկայում, չեն կարող համեմատվել այլ պետությունների ֆինանսավորման հնարավորությունների հետ, քանի որ Իրանը և Ալյասկան ունեն բնական պաշարներ և հիմնական եկամուտի ֆինանսավորումը կարող է իրականացվել դրանց միջոցով, իսկ Մակաուն ունի հագուստի արտահանման մեծ ներուժ և հիանալի վայր է մոլախաղերով հետաքրքրված զբոսաշրջիկների համար: Հավելյալ գումարը թույլ է տալիս ֆինանսավորել հիմնական եկամուտը: Նույնը կարելի է ասել եվրոպական երկրների մասին, որոնք քննարկում են հիմնական եկամուտի հնարավոր կիրառությունը: Չնայած այն փաստին, որ վերջին տարիներին փախստականների և միգրանտների հոսքը դեպի ԵՄ երկրներ ավելանում է, այնուամենայնիվ, հիմնական եկամուտը կիրառելու ցանկությունը մեծ է: 2004թ. եկեղեցիների միությունը (Ֆրիդրիխ Էբերթ հիմնադրամը և Գերմանիայի Ռայնլենդ և Վեստֆալիա մարզերի բողոքական եկեղեցիները), արհմիությունները, ՀԿ և ՁԻԱՀ կառույցները որոշեցին Նամիբիայում իրականացնել փորձնական ծրագիր, որի նպատակն էր պարզել, թե ծայրահեղ աղքատ մարդկանց կյանքում փոքր քանակի հիմնական եկամուտը ինչպիսի փոփոխություն կմտցներ: Կազմակերպիչները ու-

⁸ K. Widerquist , -Alaska Divident Blog, -About the Alaska Divident, <http://usbig.net/alaskablog/about-the-alaska-divident/>

գում էին տեսնել, թե տրվող գումարը ինչպես են մարդիկ օգտագործելու (արդյո՞ք նրանք այն կներդնեն, թե կվատնեն խմիչքի վրա, դա նրանց կծուլացնի՞, թե կոգեշնչի աշխատել ավելի քրտնաջան): Ծրագրի էությունն այն էր, որ ամեն քաղաքացի՝ աղքատ, թե հարուստ, ծնված օրից պետք է ստանա Հիմնական Եկամուտ: Ծրագիրը իրականացվում էր անկախ աղքատության մակարդակից առանց սոցիալական բյուրոկրատիայի: Բացառություն էին թռչակառուները, քանի որ նրանք ստանում են պարտադիր թռչակ: Ծրագիրը իրականացվում էր Նամիբիայի Օջիվերա և Օմիտարա տարածքներում, (1000 բնակիչ են ապրում փոշոտ և շոգ տարածքում), որոնք գտնվում են Վինհոքից հարյուր կիլոմետր դեպի արևելք: 2008 թ. դեկտեմբերից մինչև 2009 թ. ամեն անձ ստանալու էր հարյուր նամիբիական դոլար (այն հավասար է 9 եվրոյի կամ 13 դոլարի) և տրվում էր առանց որևէ պայմանի ու վերադարձնելու ենթակա չէր: Գումարը քիչ է, քանի որ 152 նամիբիական դոլար ստացողները աղքատ են համարվում, մինչդեռ 220 նամիբիական դոլար ստացողները շատ աղքատ են, իսկ պաշտոնապես, աղքատ են համարվում նրանք, ով ամսական ստանում է 316 նամիբիական դոլարից քիչ⁹: 2009թ. փորձնական ծրագիրն ավարտվեց, և որոշվեց մինչև 2012թ. մարտը բոլոր մասնակիցներին ամսական հատկացնել 80 նամիբիական դոլար (մոտ 10 դոլար): Այդ ժամանակ տվյալ տարածաշրջանում մեծացավ միգրացիան, ինչն անկանխատեսելի էր. չնայաց նրանք իրավունք չունեին օգտվելու այդ նպաստից: Փորձի ընթացքում արձանագրվել են բազմաթիվ դրական արդյունքներ: Դրանից կարելի էր եզրակացնել, որ նման ծրագրերը պետք է կիրառվեն ոչ թե մի շրջանում, այլ այն պետք է համազգային բնույթ կրեն:

2011թ. Հնդկաստանում կիրառվեց երկու փորձնական ծրագիր. 'Ինքնազբաղված Կանանց Աստղացիան' (ԻԿԱ) ՄԱԿ-ի աջակցությամբ նախաձեռնեց Հիմնական Եկամուտ ծրագիրը: 2013թ. հունվարին Հնդկաստանի Կոնգրես կուսակցությունը հայտարարեց, որ կիրառելու են ազգային հիմնական եկամուտը, որից օգտվելու են 720 միլիոն մարդ: Սկզբում Մադյա Պրադեշի ութ գյուղերում բնակվող ամեն անձ (ընդհամենը 6000 մարդ) ստանալու էր 200 րուպի (չափահասների համար) և 100 րուպի (փոքրերի համար): Գումարը հաշվարկվում էր ցածր եկամուտ ունեցող ընտանիքների ստացած եկամուտից, որը կազմում է 20-30%: Հետագայում գումարի չափը ավելացվեց մինչև 300 րուպի (մեծահասակների համար) և 150 րուպի (երեխաների համար): Դրա նպատակն էր կարգավորել գնաձևը, և ավելի շատ օգուտ ու հնարավորություններ տալ մարդկանց: Գումար մարդկանց տրվում էր առձեռն: Ծրագրի մեկնարկից երեք ամիս անց՝ գումարը որոշեցին փո-

⁹ I.Robeyns, The Basic Income Grant Experiment in Namibia, -CROOKED TIMBER website, - June 2009, <http://crookedtimber.org/2009/06/02/the-basic-income-grant-experiment-in-namibia/>

խանցել բանկային հաշվին: Ծրագիրը նախատեսված էր մեկ ու կես տարվա համար: Երկրորդ փորձնական ծրագիրը ավելի ուշ իրականացվեց քան առաջինը՝ ներառելով միայն մեկ գյուղ: Փորձը նպատակ էր հետապնդում մարդկանց օգնել անքան գումարով, որ որոշակիորեն փոխվեր նրանց ապրելակերպը, սակայն այն հիմնովին չէր բարելավելու այն:

Նամիբիայում և Հնդկաստանում անցկացված փորձերն, անկասկած, հաջողվել էին: Հիմնական եկամուտի ամբողջական կիրառումը այս պետություններում, միայն կրճատի աղքատությունը և կբարելավի տնտեսությունը: Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ արդեն երկու տարի է անցել ծրագրի փորձնական կիրառությունից, սակայն կառավարությունները դեռևս այն չեն կիրառում: Նամիբիայում հիմնական եկամուտի կիրառումը փոխարինվեց մի ծրագրով, որտեղ աղքատությունը պետք է կրճատվեր տնտեսության զարգացման միջոցով:¹⁰

Անդրե Կոելոն իր 'Ինչու հիմնական եկամուտը Նամիբիայում մինչ այժմ չի մեկնարկվել' հոդվածում նշել է. 'Գլխավոր պատճառը այն է, որ աղքատությունը մեծ կորպորատիվների շահերից է բխում': Իր հոդվածում նա պնդում է. 'պետական պաշտոնյաները, կորպորատիվ շահերը պաշտպանելու նպատակով, ժխտում են հիմնական եկամուտի ունեցած առավելությունները՝ ձգձգելով դրա հետագա զարգացումը: Այս դեպքում նրանց համար ցածր աշխատավարձով աշխատող, աղքատ ու անօգնական մարդկանց պակաս չի լինի: Այս պետություններում մեծ արդյունաբերության հիմքում ընկած է աղքատությունը':¹¹

Երբ մարդկանց նվազագույն ֆինանսական կարիքները ապահովված են և կենցաղային ծախսերը կարողանում են հոգալ, հասարակությունը սկսում է ավելի կայուն զարգանալ: Մարդիկ ավելի ինքնավստահ են դառնում: Նրանք կարող են ավելի շատ կենտրոնանալ այն աշխատանքի վրա, որ կցանկանային ունենալ: Այսպիսով, կարող ենք ամփոփել, որ հոգեբանորեն սա հասարակության համար առողջ լուծում է: Հիմնական եկամուտի կիրառությունը կարող է հիմք հանդիսանալ վաղվա լավ սերունդի համար:

¹⁰ A. Coelho, On why basic income has not yet been deployed: now it's Namibia, -May, 2016, <http://basicincome.org/news/2016/05/on-why-basic-income-has-not-yet-been-deployed-now-its-namibia/>

¹¹ A. Coelho, On why basic income has not yet been deployed: now it's Namibia, -May, 2016, <http://basicincome.org/news/2016/05/on-why-basic-income-has-not-yet-been-deployed-now-its-namibia/>

Armine GALSTYAN

The history of Basic Income and its role for eradicating poverty today

Key words: basic income, minimal needs, system of social security, citizens, poverty

Basic Income is a relevant idea and concept, which is being discussed for an implementation in many countries of the world today. The article reviews the idea of Basic Income through the history in the world (in chronological order, starting from sixteen century), and its role in today's society. It also briefly reviews the experiments and implementations of the Basic Income in different countries in the world.

Армине ГАЛСТЯН

Базовый Доход в истории человечества и его роль в искоренении нищеты

Ключевые слова: Базовый Доход, минимальные потребности, система социального обеспечения, граждане, бедность

Базовый доход является актуальной идеей и концепцией, которая обсуждается для реализации во многих странах мира сегодня. В статье рассматривается идея Базового дохода в истории мира (в хронологическом порядке, начиная с шестнадцатого века), и ее роль в современном обществе. В нем также приводится краткий обзор экспериментов и реализаций Базового дохода в разных странах мира.

Արմինե ԳԱԼՍՏՅԱՆ

Հիմնական Եկամտի պատմությունը և դրա դերն այսօր աշխարհում

Բանալի բառեր. Հիմնական Եկամուտ, նվազագույն կարիքները, սոցիալական անվտանգության համակարգ, քաղաքացիներ, աղքատություն

Հիմնական Եկամուտը ակտուալ գաղափար և հայեցակարգ է, որը քննարկման և իրականացման փուլում է շատ երկրներում այսօր: Հոդվածում վերանայվում է Հիմնական Եկամտի գաղափարը պատմության ընթացքում (ժամանակագրական կարգով, սկսած տասնվեցերորդ դարից), և նրա դերը այսօրվա հասարակության մեջ: Այն նաև հակիրճ վերանայում է Հիմնական Եկամտի փորձարկումները և դրանց ընթացքը աշխարհի տարբեր երկրներում: